ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

« 02 » հուլիսի 2018 թ. N 101

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ
Պ-Ն Հ.ՄԱՐԳԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Մարգարյան

Կից Ձեզ ենք ներկայացնում Անտառաշեն համայնքի ղեկավարի թիվ 17 որոշումը :

Առդիր՝ 1 ֆայլ :

Համայնքի ղեկավար՝ Ռ Խառատյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱՆՏԱՌԱՇԵՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Անտառաշեն համայնք

ՈՐՈՇՈՒՄ

02 ՀՈՒԼԻՍԻ 2018 թվականի N 17

"ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ" ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ Կառավարության 2011 թ-ի նոյեմբերի 10-ի "Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման կարգը հաստատելու մասին" N1582-Ն որոշման 3-րդ կետով, "Տեղական ինքնակառավարման մասին" ՀՀ օրենքի 41-րդ հոդվածով՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ՝

1.Հաստատել "Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման" Անտառաշենի համայնքային հանձնաժողովի անհատական կազմը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2.Հաստատել հանձնաժողովի աշխատակարգը՝ համաձայն թիվ 2 հավելվածի:

2.Ուժը կորցրած համարել Անտառաշեն համայնքի ղեկավարի 2012 թ-ի փետրվարի 16-ի թիվ 1-Ա որոշումը:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **Ռ.Խառատյան**

Հավելված 1
Անտառաշեն համայնքի ղեկավարի
02,07.2018 թ. N 17 որոշման

՝՝ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ՝՝ ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՆՀԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԸ

1. Ռաֆիկ Խառատյան – հանձնաժողովի նախագահ, համայնքի ղեկավար
2. Քրիստինե Քոչարյան - հանձնաժողովի նախագահի տեղակալ, հ/պ աշխատակազմի առաջատար մասնագետ-հաշվապահ
3. Ելինար Մկրտչյան – «Հայփոստ»-ի բաժանմունքի վարիչ
4. Լյուդմիլա Բիրյուկովա – ավագանու անդամ
5. Սուսաննա Խառատյան - ավագանու անդամ
6. Մարիյա Գալիցինա – համայնքի բուժքույր

Անտառաշեն համայնքի ղեկավար՝ Ռ.Խառատյան

Հավելված 2
Անտառաշեն համայնքի ղեկավարի
02,07.2018 թ. N 17 որոշման

Ա Շ Խ Ա Տ Ա Կ Ա Ր Գ

՝՝ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՊԱՏՃԱՌՎԱԾ ՎՆԱՍԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ՝՝ ԱՆՏԱՌԱՇԵՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.Սույն աշխատակարգով սահմանվում են արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման Անտառաշենի համայնքային հանձնաժողովի գործառույթները, աշխատանքների կազմակերպման կարգը:
2.Հանձնաժողովն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ օրենքներով և այլ իրավական ակտերով, միջազգային պայմանագրերով և սույն աշխատակարգով:
3.Հանձնաժողովին կից՝ հանձնաժողովի անդամների կողմից լիազորված ներկայացուցիչների ընդգրկմամբ կարող են ստեղծվել աշխատանքային խմբեր:

II.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

4.Հանձնաժողովի խնդիրներն են՝
1)կազմակերպել համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման գործընթացը.
2)համայնքի տարածքում արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի ընդհանուր հաշվառումը.
3)համայնքի հանձնաժողովների կողմից կազմված ակտերի ներկայացումը մարզային հանձնաժողով.

III.ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

5.Հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի ձևով:
6.Հանձնաժողովի նիստեր հրավիրում է հանձնաժողովի նախագանը կամ տեղակալը՝ նախագահի բացակայության դեպքում.
7. Հանձնաժողովի աշխատանքները կազմակերպում և վարում է հանձնաժողովի նախագանը կամ տեղակալը:
8.Հանձնաժողովի կողմից գնահատման ու հաշվառման են ենթակա արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասները:

9.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատման համար՝

1)կազմվում է վնասված գույքի ցանկը՝ նշելով դրանց տեսակը, գտնվելու վայրն ու համառոտ բնութագիրը.

2)ուսումնասիրվում և գնահատվում է վնասված գույքի վիճակը.

3)գնահատվում է գույքին պատճառված վնասի չափը:

10.Եթե արտակարգ իրավիճակի հետևանքով զոհվել են մարդիկ, կամ մարդկանց առողջությանը պատճառվել է վնաս, ապա ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության Հայաստանի փրկարար ծառայության մարզային փրկարարական վարչությունից դեպքի մասին տեղեկատվությունը տրամադրվում է ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարությանը և ՀՀ առողջապահության նախարարությանը՝ համապատասխան միջոցառումներ իրականացնելու նպատակով:

11.Տեղեկատվությունը ներառում է՝

1)դեպքի օրը, ամիսը, տարեթիվը, ժամը և վայրը.

2)տուժողների ազգանունները, անունները, հայրանունները, նրանց ծննդյան օրը, ամիսը, տարեթիվը, բնակության և աշխատանքի վայրերը:

3)դեպքի վայր մեկնած՝ փրկարարական աշխատանքներ իրականացնող խմբի կազմը.

4)դեպքը բնութագրող այլ հանգամանքներ՝ իրավիճակը, եղանակային պայմանները և այլն:

12.Հանձնաժողովը գործում է հետևյալ ուղղություններով՝

1)գյուղատնտեսությանը հացված վնասների գնահատում.

2)բնակչության գույքի հացված վնասների գնահատում.

3)ենթակառուցվածքներին հացված վնասների գնահատում.

4)բժշկասանիտարական հնարավոր վնասների գնահատում:

13.Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի գնահատող հանձնաժողովի կազմում ըստ ուղղությունների ընդգրկվում են արտակարգ իրավիճակների, առողջապահության, գյուղատնտեսության, կապի և տրանսպորտի, քաղաքաշինության բնագավառների մասնագետներ և մասնագիտացված կառույցների ներկայացուցիչներ, ովքեր պետք է ուսումնասիրեն, հածվառեն և գնահատեն ստեղծված իրավիճակն ու հավանական վտանգները:

14.Համայնքային հանձնաժողովի կողմից կազմված ակտերը քննարկվում են մարզային հանձնաժողովում, և համաձայնեցված ակտերը ներկայացվում են հանրապետական հանձնաժողով: Արտակարգ իրավիճակների հետևանքով ֆիզիկական և իրավաբանական անձանց պատճառված վնասի մասին վերջնական տեղեկատվությունն ամփոփում է Արտակարգ իրավիճակների հետևանքով պատճառված վնասների գնահատող հանրապետական հանձնաժողովը:

15.Հանձնաժողովի նիստերի ժամանակ ընդունված ակտերը և կազմված արձանագրություններն ստորագրում են հանձնաժողովի անդամները:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Խառատյան